ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«24» 09 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000078

Ձեռնարկողը՝ ***«ՄԱՎՐ» ՍՊԸ***
ք. Վանաձոր Լալվարի 60

Գործունեությունը՝ ***«ՁԱՆԱԽՁԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000078

«24» 09 2020թ.

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՄԱՎՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Լոռու մարզ, Դեբետ համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 1)-ին կետի բ. ենթակետի՝ «հիդրոէլեկտրակայաններ՝ 1-10 ՄՎտ հզորությամբ» «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Նկարագրական մաս «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ը կառուցված է Դեբեդ գյուղի վարչական տարածքում, Չանախչի գետի վրա /որը հայտնի է Ալարեքս անվամբ/ և շուրջ 10 տարի այն շահագործվում է: ՓՀԷԿ-ի շենքը գտնվում է Դեբետ գյուղի վարչական սահմանում, Չանախչի գետի աջ ափին՝ 1034.0 մ նիշում, որի ջրահեռացման կոորդինատական կետերն են՝ X=44039'17.2" Y= 40054'44.4": ՓՀԷԿ-ի համար անհրաժեշտ ջրառն իրականացվում է ՀԷԿ-ի շենքից մոտ 1.6 կմ վերև, Չանախչի գետի վերին հոսանքներում՝ ակունքներից մոտ 5-6 կմ հեռավորության վրա: Ալարեքս գետի ջրային ռեժիմը բնութագրվում է սահուն, երկարատև վարարումներով (մարտ-հուլիս), որը պայմանավորված է ձյան և սառույցի հալոցքի սնմամբ: Գետի երկարությունը 21 կմ է, ջրահավաքի ավազանի մակերեսը՝ 96.1կմ^2:

ՓՀԷԿ-ի բարձր տնտեսական շահավետություն ապահովելու նպատակով և ջրային ռեսուրսի արդյունավետ օգտագործման համար «ՄԱՎՐ» ՍՊԸ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ սույն նախագծով նախատեսվում է շահագործվող «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման աշխատանքների իրականացում: Վերակառուցման համար նախատեսվող ՀԷԿ-ի նոր կառույցների

/ջրընդունիչ հանգույց, 420մ երկարությամբ ճնշումային խողովակաշար, օդային գիծ/ տարածքները գտնվում են Դեբետ համայնքի վարչական սահմաններում: Մինչև սույն նախագծի իրականացումը ՓՀԷԿ-ի կողմից օգտագործել է գետի 1104,5մ և 1034մ նիշերի միջև առաջացող՝ 70,5մ անկումը, ապահովելով 1.4 ՄՎտ դրվածքային հզորություն: ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման համար նախատեսված է կառուցել նոր հիդրոտեխնիկական կառույցներ և օգտագործել Չանախչի գետի՝ 1136մ-1034մ նիշերի միջև առաջացող 102մ անկումը: Նշված անկումը ճնշումային խողովակաշարին միացնելու համար, նախատեսված է կառուցել ընդհանուր՝ 420 գծմ երկարությամբ խողովակաշար, որը միանալու է գոյություն ունեցող՝ 1420 մմ տրամագծի 1240մ երկարությամբ դերիվացիոն պողպատե խողովակաշարին՝ երկարացնելով այն: Ճնշումային խողովակաշարով Չանախչի գետի մնացորդային ելքը՝ առավելագույնը 2.02 խմ/վրկ ջրաքանակով կմոտեցվի գոյություն ունեցող ՓՀԷԿ-ի շենքին և շենքում տեղադրվող 3 խումբ ագրեգատների միջոցով կապահովվի նախագծված՝ 2.2 Մվտ դրվածքային հզորությունը: ՓՀԷԿ-ի համար անհրաժեշտ 2.02 խմ/վրկ ջրաքանակը կտրվի Չանախչի գետի 1136.0 մ նիշում, ջրառի՝ X=44040'10.0" Y=40054'29" կոորդինատական կետերում: ՀԷԿ-ի կառուցվածքների զբաղեցրած տարածքների հողերի նպատակային նշանակությունը էներգետիկայի է, օգտագործման նպատակը՝ ՀԷԿ-ի սպասարկման համար: ՓՀԷԿ-ի կառույցների հողամասերը /գոյություն ունեցող և նախագծված/ սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը: Դիտարկվող տարածքը չի առնչվում բնապահպանական, կամ անտառային տարածքների հետ:

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի օգտագործվող գետահատվածում Դեբետ համայնքի համար ոռոգման, կամ այլ նպատակով ջրառ չի իրականացվում:

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի համար Ընկերությանը տրամադրվել է թիվ 000027 տրվ. 06.02.2020թ. ջրօգտագործման թույլտվություն, որով ՓՀԷԿ-ի համար առավելագույն հաշվարկային ջրաքանակը սահմանվել է՝ առավելագույնը՝ 2.02 խմ/վրկ /հունիս ամիս/ իսկ նվազագույնը՝ 0.27 խմ/վրկ /դեկտեմբեր ամիս/: Ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված Չանախչի գետից ջրօգտագործման ծավալի միջինը ցուցանիշը կազմում է՝ 31000.0 հազ.մ^3/տարի, 84930.0 մ^3/օր, 980.0լ/վրկ: Ջրընդունիչ հանգույցում ջրօգտագործման հաշվառման համար, ջրընդունիչ հանգույցը կահավորվելու է ջրաչափական դիտակետով և ջրաչափիչ սարքավորումով: Այդ սարքավորումների ավտոմատ կառավարման համակարգի միջոցով կկարգավորվի ՀԷԿ-ի կողմից օգտագործվող ջրաքանակը և սահմանված բնապահպանական ելքի չափաքանակը: ՀՀ կառավարության 2018թ. հունվարի 25-ի N 57-Ն որոշման պահանջներին համապատասխան հաշվարկվել են Չանախչի գետի օգտագործվող հատվածում էկոլոգիական թողքերը /համաձայն գ.Ալարեքս–դ.Դեբեդ հիդրոլոգիական դիտակետի տվյալների/, որոնց մեծություններն ըստ ամիսների պատվարի ներքին բիեֆ են բաց թողնվում նախագծում նախատեսված ձկնուղու և լվացիչների միջոցով: Ձկնուղին նախատեսված է իրականացնել 2 մ լայնությամբ, 9մ երկարությամբ: Այն աստիճանաձև է, կազմված՝ մուտքամասից, ելքամասից, 6 աստիճաններից և 6 բաժանմունքից, որոնք ունեն շախմատաձև անցքեր: Աստիճանների բարձրությունը 0.25մ է, լայնությունը՝ 1.25մ: Ձկնուղում ջրի հոսքի արագությունը 0.25մ/վրկ է, ինչը նպաստավոր ձկների տեղաշարժի համար: Ձկնուղու մուտքամասի բարձունքային նիշը ցածր լինելով ջրընդունիչ կառուցվածքի՝ տղմազտարանի կողային ջրընդունիչի նիշից, ապահովում է բնապահպանական

ելքի մուտքի առաջնահերթությունը: Ձկների պահպանությունը հուսալի ապահովելու համար ջրառի գլխամասում, դերիվացիոն խողովակաշարի մուտքի վրա նախատեսված է տեղադրել մանրաճաղավանդակ և 5x5 մմ չափերով ձկնապաշտպան մետաղական չժանգոտվող ցանց, որով կկանխի նաև մանրաձկների մուտքը հիդրոագրեգատների թիակների վրա: Ձկնապաշտպան միջոցառումները նախագծվել են, հաշվի առնելով Չանախչի գետի օգտագործվող գետահատվածին բնորոշ ձկնատեսակները:

ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման աշխատանքները ներառում են.

- նոր ջրընդունիչ հիդրոհանգույցի կառուցում, բաղկացած՝ 1.5 մ բարձրությամբ բետոնային ջրթափային պատվարից, ճակատային ջրթող մաքրիչից, ձկնանց կառուցվածքից, կողային միաչքանի ջրընդունիչից, մոտեցնող ջրանցքից, պարզարանից և ճնշումային խցից,
- l=420 մ երկարության, d=1420x10մմ տրամաչափի պողպատե ճնշումային խողովակաշարի կառուցում, որի միջոցով պահանջվող հաշվարկային ելքը կտեղափոխվի գոյություն ունեցող ճնշումային խողովակաշարին,
- ՓՀԷԿ-ի շենքի վերակառուցման աշխատանքներ՝ պայմանավորված շենքում 3 նոր հիդրոագրեգատների տեղադրումով /ներքին հարդարում/,
- Կայանային հանգույցի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ.
- 6150մ երկարությամբ 10 կվ նոր օդային գծի կառուցում:

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ը նախկինում միացված էր Դեբետ գյուղին սնող 10 կվ լարման գծից, որն առաջ էր բերում հիդրոկայանի հաճախակի պարապուրդի և էլեկտրաէներգիայի կորստի: ՀԷՑ-ի կողմից իրականացվել է տեխնիկական պայմանների փոփոխություն, այն է՝ «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ը միացնել <<Դսեղ>> 35/10 կվ ե/կ-ի 10 կվ Բս-ի թիվ 1 բջջին, նախագծի համաձայն կառուցելով 10 կվ օդային գիծ /որը բնակավայրի տարածքով անցնում է ինքնակրող մեկուսացված հաղորդալարերով/ և մոնտաժվում է 120 մետաղական հենարաններով /համաձայն 07.03.2019թ. Հայաստանի էլեկտրական ցանցերի կողմից տրված տեխնիկական պայմանների/: Օդային գծի տարածքները ևս անցնում են Դեբետ համայնքի վարչական սահմաններով, ճանապարհի հարևանությամբ: Օդային գծի և խողովակաշարի անցկացման տարածքներում ծառահատումներ չեն իրականացվում:

ՀԷԿ-ի շենքում տեխնիկական վերազինման նպատակով նախատեսված է տեղադրել 2 հատ՝ 1250 կվտ և 1 հատ՝ 750 կվտ Ֆրենսիս տիպի խխունջաձև տուրբիններ և 2 հատ՝ 1000կվտ և մեկ հատ՝ 500կվտ սինխրոն գեներատորներ: Կայանային հանգույցի տարածքում նախատեսված է տեղադրել համապատասխան սարքավորումներով նոր՝ 6կվ/10կվ տրանսֆորմատորային ենթակայան, որտեղ գոյություն ունեցող երեք՝ 10/04 կվ տրանսֆորմատորները փոխարինվելու են երեք՝ 10/6 կվ տրանսֆորմատորներով: Տեղադրվող տրանսֆորմատորները կահավորված են բաժանարարներով և յուղային անջատիչներով, ինչպես նաև յուղահավաք և պաշտպանիչ սարքավորումներով: Մնացորդային տրանսֆորմատորային յուղը պայմանագրային հիմունքներով կհանձնվի այդ թափոնը վերամշակող կազմակերպություններին:

Աշխատանքների ավարտից հետո, կայանային հանգույցի այն հատվածները, որտեղ բացակայում է կանաչ գոտին իրականացվելու են կանաչապատման

աշխատանքներ: Վերակառուցման և վերազինման արդյունքում «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ը կունենա հետևյալ ջրաէներգետիկ ցուցանիշները.

Հաշվարկային մակարդակը գլխային հանգույցի ճնշումային խցում	- 1136մ
Հիդրոտուրբինի աշխատանքային անվի առանցքի նիշը	- 1034մ
Ստատիկ ճնշում, (մ)	- 102մ
Հաշվարկային ելք, (մ³/վ)	- 2.02 մ³/վ
Դրվածքային հզորություն, (ՄՎտ)	- 2.2ՄՎտ
Էլ. էներգիայի միջին տարեկան արտադրանք, (մլն.կՎտ.ժ)	- 6.37մլն.կՎտ.ժ
Հիդրոագրեգատների քանակ	- 3 հատ:

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման շինարարական աշխատանքների համար օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, որոնք ներկայումս օգտագործվում են ՓՀԷԿ-ի կառույցների սպասարկման համար:

ՓՀԷԿ-ի համար նոր հիդրոտեխնիկական կառուցվածքների շինարարության և շահագործման արդյունքում հնարավոր են որոշակի բացասական ազդեցություններ՝ մթնոլորտային օդի, հողային և ջրային ռեսուրսի, գետի ջրային ռեժիմի և կենսաբազմազանության վրա: Ազդեցությունները կարող են ուղեկցվել հողային աշխատանքների ընթացքում ծխագազերի և փոշու ժամանակավոր արտանետումներով և լանդշաֆտի ժամանակավոր խախտմամբ: Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը կազմակերպվելու են շինհրապարակի տարածքում: Հայտում նախատեսվել են մթնոլորտային օդի և հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված միջոցառումներ: Ընդհանուր վերակառուցման աշխատանքների ընթացքում շինարարության ժամանակահատվածի համար հանվող հողային զանգվածը կկազմի 1200մ³, իսկ հետլիցքը՝ 353 մ³: Հողային աշխատանքների ժամանակ կհանվի 150.0մ³ բերրի հող, որը առանց պահեստավորման, խողովակաշարը խրամուղում տեղադրելուց հետո օգտագործվելու է տարածքի վերականգնման համար, իսկ մնացորդային քանակը կօգտագործվի կայանային հանգույցի կանաչապատման համար: Իսկ մնացորդային գրունտը /700 մ³ ծավալով/ Դեբետի համայնքապետարանի հետ համաձայնեցված կտեղափոխվի մինչև 3կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր, կամ կօգտագործվի շրջակա տարածքների բարեկարգման համար: Հայտում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ ՀԷԿ-ը սպասարկող անձնակազմի աշխատանքի անվտանգությանը և սոցիալական պայմանների ապահովմանը /այդ թվում՝ բարձր լարման տեղամասերում նախազգուշացնող վահանակների տեղադրում, ագրեգատների տեխնիկական վիճակի ապահովում, հիդրոագրեգատների աղմուկի և թրթռումների մակարդակների ապահովում նորմերի սահմաններում և այլն/: Կայանային հանգույցում ՀԷԿ-ի շենքն ապահովված է ՀԷԿը սպասարկող անձնակազմի համար ջրամատակարարման և կենցաղային կեղտաջրերի հեռացման բավարար պայմաններով և համապատասխան սանիտարական սարքերով:

Նախագծով նախատեսված նոր հիդրոագրեգատներով տեխնիկական վերազինումը նպաստում է ՀԷԿ-ի շահագործման փուլում աղմուկի, ինչպես նաև թրթռման մակարդակի նվազեցմանը:

Վառելիքի, քսայուղերի, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղի մնացորդային քանակների պահեստավորման համար նախատեսված է հատուկ տարողություններ՝ բացառելու նպատակով անձրևաջրերի հետ դրանց խառնումը և տարածումը շրջակա տարածքներ:

Շահագործման փուլում, ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում Չանախչի գետում բնապահպանական թողքի ապահովումն ըստ ամիսների, ինչը սահմանված է նաև ջրօգտագործման թույլտվությամբ: Անկախ ՓԿԷԿ-ի ջրապահանջից, այդ ելքը միշտ պետք է առկա լինի գետի հունում, ապահովելու համար տարվա բոլոր սեզոններին գետի ստորին հոսանքներում ջրային էկոհամակարգի կայունությունը:

«ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման աշխատանքների շրջանակներում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվել է 6558.35 ՀՀ դրամ, որի մեջ մտնում են տարածքի կանաչապատումը և բարեկարգումը փոշենստեցումը, ձկնապաշտպան միջոցառումները: Բոլոր միջոցառումներն ամփոփվել են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում:

Պատճառաբանական մաս. նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Դեբետ համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացավ հավանության: Քննարկումների ընթացքում Ընկերության տնօրենն իր պատրաստակամությունն հայտնեց՝ Դեբետ համայնքի համար սոցիալական ծրագրերի շարունակական իրականացմանը և ավարտին հասցնելու համայնքի արտաքին լուսավորության աշխատանքները:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են՝ Լոռու մարզպետարանը, առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները ևս հաշվի են առնվել:

Այսպիսով, ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, կարելի է եզրահանգել, որ նախագծի փոփոխությունը մշակվել է ՀԷԿ-երին ներկայացվող շինարարական նորմերին և բնապահպանական օրենսդրական պահանջներին համապատասխան: Գործունեությունը չի առաջացնի լրացուցիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն Չանախչի գետի էկոհամակարգի և շրջակա տարածքների վրա, քանի որ ինչպես նախկինում, այնպես էլ նախագծով նախատեսված ՓՀԷԿ-ի ջրաքանակը մնում է նույնը: Նախագծային լուծումների ճիշտ իրականացման և ներդրված գումարների նպատակային օգտագործման արդյունքում բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա հնարավորինս կնվազեցվեն և շրջակա միջավայրի վրա թույլատրելի նորմերի սահմաններում են:

Փորձաքննական պահանջներ

1. ՀԷԿ-ի ջրօգտագործման պայմանների կատարումը հսկելու համար, մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել ջրօգտագործման ծավալների հաշվառման, դրանց առցանց տեղափոխման և հասանելիության ապահովման աշխատանքներ՝ ջրառի կետը ջրաչափական դիտակետով ու կապարակնքված ջրաչափով ապահովելու միջոցով (հիմք ընդունելով ՀՀ ջրային օրենսգրքի 32-րդ հոդվածի պահանջները):

2. Շահագործման փուլում Չանախչի գետի ձկնատեսակների, գետային էկոհամակարգի պահպանման և կայուն ջրօգտագործման նպատակով <<Չանախչի-2>> ՓՀԷԿ-ի ջրընդունիչ հանգույցում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական թողքի ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման ջրաչափական համակարգ՝ բնապահպանական թողքերի սահմանված չափաքանակներն ըստ ամիսների նվազագույնը՝ 180լ/վրկ /հունվար ամիս/-առավելագույնը՝ 750լ/վրկ /ապրիլ ամիս/ պահպանելու համար:

3. Շինարարության և շահագործման փուլերում առաջացող՝ շինարարական աղբի և տարբեր տեսակի թափոնների (այդ թվում նաև վտանգավոր թափոններ՝ տրանսֆորմատորային յուղ, բանեցված յուղեր, քսայուղեր և այլն) տեղադրումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համապատասխան համաձայնեցումների առկայության դեպքում (մինչև շինարարական աշխատանքների մեկնարկը):

4. Շինարարական և շահագործման փուլերում գետի էկոհամակարգի և ցամաքային տարածքների բնական բաղադրիչների (հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն) պահպանման և հնարավոր ազդեցությունների կանխարգելման համար անհրաժեշտ է ապահովել բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացումը, ինչպես նաև օգտագործվող գետահատվածում սանիտարա-հիգիենիկ վիճակի պահպանումը:

5. Տրանսֆորմատորային յուղով շրջակա տարածքներն աղտոտումից կանխելու նպատակով, անհրաժեշտ է տրանսֆոմատորները կահավորել յուղահավաք համակարգով, իսկ բանեցված յուղերը հեռացնել սահմանված կարգով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԱՎՐ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «ՉԱՆԱԽՉԻ-2» ՓՀԷԿ-ի վերակառուցման և վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան